4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս.Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված ավտոտնակի ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

5. Վանաձոր քաղաքի Տ.Մեծի պող թիվ 24/51գ հասցեում գտնվող գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Տիգրան Մեծի պողոտա, թիվ 24-51/5 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 մայիսի 2021 թվականի N 1027

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՓՈՂ ԹԻՎ 14/8Գ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ,
ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԱԿՏՈՏՆԱԿԸ
ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագիծը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1878065 վկայականը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել օրինական Վանաձոր քաղաքի Համբարձումյան փող թիվ 14/8գ հասցեում գտնվող, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 22.94քմ մակերեսով բնակելի գործառնական նշանակությամբ ավտոտնակը:

2. Փոխել Վանաձոր քաղաքի Համբարձումյան փող թիվ 14/8գ հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 0.0023հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի հասարակական կառուցապատման այլ հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի:

3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագծի համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս.Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված ավտոտնակի ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

5. Վանաձոր քաղաքի Համբարձումյան փող թիվ 14/8գ հասցեում գտնվող գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Համբարձումյան փողոց, թիվ 14-8/8 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 մայիսի 2021 թվականի N 1028

ՄԱՆԵ ՏԻԳՐԱՆԻ ՊԱՊԱՆՅԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ
ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 30.04.2021 թվականին կազմվել է արձանագրություն և զեկուցագիր, որի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Մանե Պապանյանի կողմից «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու հիմքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 30.04.2021 թվականին կազմված արձանագրության և զեկուցագրի համաձայն՝ Մանե Պապանյանը Վանաձոր քաղաքի Բաղրամյան պողոտա 114-8 հասցեում գտնվող լցակայանին կից կառուցված «Էկո Ֆերմա» օբյեկտը առանց համապատասխան ավարտական ակտի (շահագործման թույլտվության) որպես հասարակական սպասարկման օբյեկտ է շահագործել:

2021 թվականի ապրիլի 30-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2021 թվականի մայիսի 13-ին իրավիրվել են վարչական վարույթի լուծմանը: Մանե Պապանյանին ուղարկված փոստային ծանուցագրի հետադարձ կտրոնը առկա է:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ վարույթին չի ներկայացել վարչական ակտի հասցեատերը, իսկ օրենքը բացառում է առանց նրա ներկայության համապատասխան վարչական ակտ ընդունելը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, 49-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 53-րդ և 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Մանե Տիգրանի Պապանյանի վերաբերյալ վարչական վարույթը կասեցնել:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումն Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:
4. Որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով համայնքի ղեկավարին և դատական կարգով ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. մայիսի 18
ք.Վանաձոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԾՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 մայիսի 2021 թվականի N 1029

ԱՐԱՅԻԿ ԳԵՎՈՐԳԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ
ԿԱՍԵՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 28.04.2021 թվականին կազմվել է արձանագրություն և զեկուցագիր, որի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Արայիկ Գևորգյանի կողմից «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու հիմքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 28.04.2021 թվականին կազմված արձանագրության և զեկուցագրի համաձայն՝ Արայիկ Գևորգյանը Վանաձոր քաղաքի Կ. Դեմիրճյան փողոցի վրա գտնվող «Պրիզ» ավտոտեխսպասարկման կետի տարածքում իրականացրել է ինքնակամ շինարարական աշխատանքներ, որը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք է:

2021 թվականի ապրիլի 28-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2021 թվականի մայիսի 12-ին իրավիրվել են վարչական վարույթի լուծումներ: Արայիկ Գևորգյանին ուղարկված փոստային ծանուցագրի հետադարձ կտրոնը առկա չէ:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ վարույթին չի ներկայացել վարչական ակտի հասցեատերը, իսկ օրենքը բացառում է առանց նրա ներկայության համապատասխան վարչական ակտ ընդունելը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, 49-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 53-րդ և 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Արայիկ Գևորգի Գևորգյանի վերաբերյալ վարչական վարույթը կասեցնել:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումն Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:
4. Որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով համայնքի ղեկավարին և դատական կարգով ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



2021թ. մայիսի 18
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 մայիսի 2021 թվականի N 1030

ԱՆԺԵԼԱ ՄԱՐՏԻՆԻ ԽԱՐԱԶՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի Տարոնի բաժնի պետի գրության և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի արձանագրության և զեկուցագրի հիման վրա 2021 թվականի ապրիլի 20-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ըննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի Տարոնի բաժնի պետի գրության համաձայն՝ Վանաձոր քաղաքի Նժդեհի 1/52-53 բնակարանի բնակիչ Ալվարդ Հրաչիկի Մխիթարյանը ահազանգել է, որ Նժդեհի 1-ին շենքի 5-րդ շքամուտքում շինարարություն են անում: Շինարարական աշխատանքներն իրականացրել է Մարտին Հրայրի Խարազյանը, ով հայտնել է, որ տարածքը սեփականության իրավունքով պատկանում է Անժելա Մարտինի Խարազյանին:

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 20.04.2021 թվականին տրված արձանագրության և զեկուցագրի համաձայն՝ Անժելա Խարազյանը Վանաձոր քաղաքի Նժդեհի փողոցի թիվ 1 բազմաբնակարան շենքի 5-րդ շքամուտքի (15 քմ տարածքը սեփականության իրավունքով պատկանում է իրավախախտումը կատարած Անժելա Խարազյանին) տարածքում ինքնակամ քանդել է բետոնե աստիճաններ:

2021 թվականի ապրիլի 20-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2021 թվականի մայիսի 04-ին իրավիրվել են վարչական վարույթի լուծման, որին մասնակցելու նպատակով ներկայացել են Ալվարդ Մխիթարյանը, Մարտին Խարազյանը և ՀՀ ոստիկանության Տարոնի

ՀՈԲ տեսուչ, կապիտան Սուրեն Անանյանը: Անժելա Խարազյանը վարչական վարույթի լուսններին չի ներկայացել:

Վարչական վարույթի լուսնների ընթացքում Ավարդ Մխիթարյանը հայտնել է, որ այդ տարածքը եղել է շքամուտք և ոչ ոք իրավունք չունի այն սեփականացնել: Խնդրել է վերականգնել շքամուտքը և տասը աստիճանները՝ բերելով նախկին տեսքին:

Մարտին Խարազյանը հայտնել է, որ պատրաստ է միացնել և բետոնապատել հատակը:

Մարտին Խարազյանը վարչական մարմին է ներկայացրել 02.03.2021 թվականի անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը և ՀՀ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 05032021-06-0010 վկայականը:

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 18 մայիսի 2021 թվականին տրված զեկուցագրի համաձայն՝ Անժելա Խարազյանը կատարել է վարչական իրավախախտում, այն է՝ բազմաբնակարան շենքում իրականացրել է ինքնակամ ձևափոխություն:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ունեցվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե այն կատարող անձը գիտակցել է իր գործողության կամ անգործության հակաիրավական բնույթը, կանխատեսել է դրա վնասակար հետևանքները և ցանկացել դրանք, կամ գիտակցաբար թույլ է տվել այդ հետևանքների առաջացումը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտով սահմանված շրջանակներում, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքին և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան: Տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը, ինչպես նաև բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցներ կատարելը, բացառությամբ գյուղական համայնքներում տնամերձ հողամասի վրա ինքնակամ կառուցված անհատական բնակելի տան՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 219¹-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները իրենց իրավասության սահմաններում քննում են օրենսգրքի 154-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը: Համայնքի ղեկավարը տեղական ինքնակառավարման մարմինների անունից նշված հոդվածի վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ, 154-րդ, 219¹-րդ, 245-րդ, 279-րդ հոդվածներով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով, 30-րդ հոդվածի 1-ին մասով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Անժելա Մարտինի Խարազյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք կատարելու համար և նշանակել տուգանք՝ 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:
2. Առաջարկել Անժելա Մարտինի Խարազյանին՝ Վանաձոր քաղաքի Նժդեհի փողոցի թիվ 1 բազմաբնակարան շենքի 5-րդ շքամուտքը վերականգնել՝ բերելով նախկին տեսքին:
3. Անժելա Մարտինի Խարազյանին՝ տուգանքի գումարը վճարել Վանաձորի ՏԳԲ 900235401537 հաշվարկային հաշվին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:
5. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:
6. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
7. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
8. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ.մայիսի18

ք. Վանաձոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 մայիսի 2021 թվականի N 1031

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՌԱԶՄԻԿԻ ԽԱՐԱԶՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ
ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԵԶՐԱՓԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Աշոտ Գրիգորյանի դիմումի համաձայն՝ ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 24.02.2021 թվականին կազմվել է արձանագրություն և զեկուցագիր, որի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Մարգարիտա Խարազյանի կողմից «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու հիմքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Աշոտ Գրիգորյանը 20.02.2021 թվականի դիմումով հայտնել է, որ իրեն պատկանող Նժդեհի 9 շենք, 4 բն. հասցեի վերնահարկում բնակվող հարևանը կատարել է շինարարական աշխատանք՝ շքամուտքի շնորհիվ ավելացրել է սենյակ, շինարարությունը կատարել է խախտումներով, որի պատճառով իր բնակարանը մասամբ չի լուսավորվում և բնակարանի պատերը ճաքել են:

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 24.02.2021 թվականին կազմված արձանագրության և զեկուցագրի համաձայն՝ Մարգարիտա Խարազյանը (հասցե՝ ք. Վանաձոր, Աճառյան փ., 15/11) Վանաձոր քաղաքի Նժդեհի 9/7 հասցեում շինարարության ընթացքում կատարած նախագծային շեղումների հետևանքով առաջացրել է ինքնակամ կառույցներ: Նախագծային շեղումներն են՝ բաց պատշգամբի լայնությունը նախագծով 1 մետր է, փաստացի կառուցված է 1,27 մետր, պատշգամբի շրջանակի էլեմենտները երկտավր, 18-ի փոխարեն անկյունակներ են, ծածկը մոնոլիթ է՝ թեթև կոնստրուկցիաների փոխարեն, փայտե կաղապարները ապամոնտաժված չեն, որը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք է:

2021 թվականի փետրվարի 25-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2021 թվականի մարտի 11-ին հրավիրվել են վարչական վարույթի յուրմներ, որին մասնակցելու նպատակով

ծանուցվել և ներկայացվել էր Աշոտ Գրիգորյանը իսկ Մարգարիտա Խարազյանին ուղարկված փոստային ծրարը ետ էր վերադարձել «տեղափոխված» նշումով:

Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից 22 մարտի 2021 թվականին ընդունվել է «Մարգարիտա Ռազմիկի Խարազյանի վերաբերյալ վարչական վարույթը կասեցնելու մասին» թիվ 542 որոշումը:

Վարչական մարմնին է ներկայացվել սույն որոշման փոստային հետադարձ կտրոնը, որի համաձայն՝ Մարգարիտա Խարազյանը որոշումը ստացել է 27.03.2021 թվականին:

Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից 05 ապրիլի 2021 թվականին ընդունվել է «Մարգարիտա Ռազմիկի Խարազյանի վերաբերյալ վարչական վարույթը վերսկսելու մասին» թիվ 707 որոշումը:

2021 թվականի ապրիլի 19-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին ներկայացել են Աշոտ Գրիգորյանը և Մարգարիտա Խարազյանը:

Աշոտ Գրիգորյանը պնդել է պատշգամբի առաջ եկած մասի ապամոնտաժման պահանջը և ցանկացել է ստանալ իր կողմից կրած վնասների փոխհատուցում:

Մարգարիտա Խարազյանը հայտնել է, Վանաձոր քաղաքը գտնվում է սեյսմիկ գոտում և իր նոր վերանորոգված բնակարանում ևս առաջացել են ճաքեր: Ապացուցվելու դեպքում, որ ճաքերն առաջացել են իր կողմից կատարված վերանորոգման հետևանքով, պատրաստակամ է դրանք վերացնել:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով, 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) ենթակետով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Մարգարիտա Ռազմիկի Խարազյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը եզրափակել:

2. Առաջարկել Մարգարիտա Ռազմիկի Խարազյանին վերացնել Աշոտ Գրիգորյանի բնակարանի պատերի և առաստաղի թերությունները կամ փոխհատուցել Աշոտ Գրիգորյանին պատճառված վնասը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումն Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

5. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 մայիսի 2021 թվականի N 1032

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԹԱՄԱՆՑԻՆԵՐԻ ՓՈԴՈՑԻ 2 (ՊԱՅՄԱՆԱԿԱՆ) ՀԱՍՑԵՆՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՅՐԱՆ ԱՐԱՄԱՅԻՍԻ
ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՋԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ
ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սեյրան Արամայիսի Գրիգորյանի (ծնված՝ 17.08.1961թ.) դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, Փոխադարձ հաշվարկների ստուգման ակտը, 21.04.2021 թվականի թիվ 1060 հայտարարությունը (նոտարական ակտի կոդ: 843-20210421-66-5059715), 17.03.2021թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-38/21 Ի եզրակացությունը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱԶ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Թամանցիների փողոցի 2 (պայմանական) հասցեում գտնվող բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 248.7քմ մակերեսով հողամասը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1991թ., դրա կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 248.7քմ մակերեսով հողամասը զբաղեցվել և շահագործվում է սկսած 1988թ.-ից: Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի ա) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Սեյրան Արամայիսի Գրիգորյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր քաղաքի Թամանցիների փողոցի 2 /պայմանական/ հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 248.7քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3. Վանաձոր քաղաքի Թամանցիների փողոցի 2 (պայմանական) հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Թամանցիների փողոց, թիվ 2-3/4 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. մայիսի 18
Ք.Վանաձոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 մայիսի 2021 թվականի N 1033

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Ն.ՍՏԵՓԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 2 ՀԱՍՑԵՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ,
ԷԴՎԱՐԴ ՍԱՐԳՍԻ ԲՈՋՈՒԿՅԱՆԻՆ, ՎԱԶԱԳԱՆ ՍԱՐԳՍԻ ԲՈՋՈՒԿՅԱՆԻՆ ԵՎ
ՀՐԱԶՅԱ ՍԱՐԳՍԻ ԲՈՋՈՒԿՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ
ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԵՐԵՔ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ
ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Էդվարդ Սարգսի Բոջուկյանի և Վաչագան Սարգսի Բոջուկյանի, Հրաչյա Սարգսի Բոջուկյանի լիազորված անձ Պերճ Էդվարդի Բոջուկյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 24122020-06-0050 վկայականը, 30.03.2021թ. տրված թիվ 1678 (նոտարական ակտի կոդ: 763-20210415-64-5046763) և 14.04.2021թ. տրված թիվ 1677 (նոտարական ակտի կոդ: 763-20210415-64-5046815) լիազորագրերը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱԶ-ի կողմից տրված հատակագծերը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2) ենթակետով և 32-րդ կետով՝ **որոշում եմ.**

1. Տարանջատել Վանաձոր քաղաքի Ն.Ստեփանյան փողոց թիվ 2 հասցեում գտնվող, Էդվարդ Սարգսի Բոջուկյանին, Վաչագան Սարգսի Բոջուկյանին և Հրաչյա Սարգսի Բոջուկյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող բնակելի տունը և դրանով զբաղեցված հողամասը՝ համաձայն ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱԶ-ի կողմից տրված թիվ 1, թիվ 2 և թիվ 3 հատակագծերի:

2. Վանաձոր քաղաքի Ն.Ստեփանյան փողոց թիվ 2 հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել փոստային հասցեներ.

ա) 0.01298 հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շինությունների փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Ն.Ստեփանյան փողոց, թիվ 2 բնակելի տուն (հատակագիծ թիվ 1).

բ) 0.04018 հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շինությունների փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Ն.Ստեփանյան փողոց, թիվ 2/2 բնակելի տուն (հատակագիծ թիվ 2):

գ) 0.08461 հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շինությունների փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Ն.Ստեփանյան փողոց, թիվ 2/3 բնակելի տուն (հատակագիծ թիվ 3):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. մայիսի 18
ք. Վանաձոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 մայիսի 2021 թվականի N 1034

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 77/7-2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՌՈՒՋԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՅԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռուզաննա Հովհաննեսի Վարդանյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 10052021-06-0035 վկայականը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 48¹-րդ հոդվածով և 76-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ կետի ա) ենթակետով՝ որոշում եմ.

1. Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա թիվ 77/7-2 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 19.9քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 10052021-06-0035 վկայականի, կառուցապատման իրավունքով, 5 տարի ժամկետով տրամադրել Ռուզաննա Հովհաննեսի Վարդանյանին՝ տաղավար տեղադրելու նպատակով:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Ռուզաննա Հովհաննեսի Վարդանյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 19.9քմ մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիր՝ 1.0քմ մակերեսով հողամասի համար ամսական վճարը սահմանելով 1200 (հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. մայիսի 19
ք. Վանաձոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 մայիսի 2021 թվականի N 1035

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 77/7-4 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶՎԱԾ
ՀՈՂԱՄԱՍԸ ԱԼԼԱ ՍԵԼՄԱՆԻ ՆԱԶԱՐՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱԴԱՏՄԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ալլա Սելմանի Նազարյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 11052021-06-0002 վկայականը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 48¹-րդ հոդվածով և 76-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ կետի ա) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա թիվ 77/7-4 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 20.0քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 11052021-06-0002 վկայականի, կառուցապատման իրավունքով, 5 տարի ժամկետով տրամադրել Ալլա Սելմանի Նազարյանին՝ տաղավար տեղադրելու նպատակով:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Ալլա Սելմանի Նազարյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 20.0քմ մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիր՝ 1.0քմ մակերեսով հողամասի համար ամսական վճարը սահմանելով 1200 (հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. մայիսի 19
ք.Վանաձոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՃՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 մայիսի 2021 թվականի N 1036

ՎԱՆԱՃՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 77/7-5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՃՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԱԼԼԱ ՍԵԼՄԱՆԻ ՆԱԶԱՐՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ալլա Սելմանի Նազարյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 10052021-06-0040 վկայականը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 48-րդ հոդվածով և 76-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ կետի ա) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա թիվ 77/7-5 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 19.8քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 10052021-06-0040 վկայականի, կառուցապատման իրավունքով, 5 տարի ժամկետով տրամադրել Ալլա Սելմանի Նազարյանին՝ տաղավար տեղադրելու նպատակով:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Ալլա Սելմանի Նազարյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 19.8քմ մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիր՝ 1.0քմ մակերեսով հողամասի համար ամսական վճարը սահմանելով 1200 (հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. մայիսի 19
ք.Վանաձոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 մայիսի 2021 թվականի N 1037

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 19 ՄԱՐՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 539
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 25/03/2021թ. թիվ Կ-25032021-06-0107 որոշումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 19 մարտի 2021 թվականի թիվ 539 որոշումը, ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱԶ-ի կողմից տրված նոր հատակագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 19 մարտի 2021 թվականի «Վանաձոր քաղաքի Լուսավորիչի փող թիվ 38/1 հասցեում գտնվող մասնաշենքի զբաղեցրած հողամասի ճշտված սահմանները հաստատելու եվ նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 539 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները .

1. Որոշման 1-ին կետը «հատակագծի:» բառից հետո լրացնել «Հողամասում առկա 73.09քմ ընդհանուր մակերեսով ինքնակամ պարիսպները թողնել ինքնակամ» բառերով:
2. Վանաձոր համայնքի ղեկավարի 19 մարտի 2021 թվականի թիվ 539 որոշման հատակագիծը փոխարինել նոր հատակագծով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



2021թ. մայիսի 19
Ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 մայիսի 2021 թվականի N 1038

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 77/7-3 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶՎԱԾ
ՀՈՂԱՄԱՍԸ ԱԼԼԱ ՍԵԼՄԱՆԻ ՆԱԶԱՐՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ալլա Սելմանի Նազարյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 10052021-06-0038 վկայականը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 48¹-րդ հոդվածով և 76-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ կետի ա) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա թիվ 77/7-3 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 19.9քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 10052021-06-0038 վկայականի, կառուցապատման իրավունքով, 5 տարի ժամկետով տրամադրել Ալլա Սելմանի Նազարյանին՝ տաղավար տեղադրելու նպատակով:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Ալլա Սելմանի Նազարյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 19.9քմ մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիր՝ 1.0քմ մակերեսով հողամասի համար ամսական վճարը սահմանելով 1200 (հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. մայիսի 19
Ք.Վանաձոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 մայիսի 2021 թվականի N 1039

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 77/7-1 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶՎԱԾ
ՀՈՂԱՄԱՍԸ ՌՈՒՋԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ
ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռուզաննա Հովհաննեսի Վարդանյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 10052021-06-0032 վկայականը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 48¹-րդ հոդվածով և 76-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ կետի ա) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա թիվ 77/7-1 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 19.9քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 10052021-06-0032 վկայականի, կառուցապատման իրավունքով, 5 տարի ժամկետով տրամադրել Ռուզաննա Հովհաննեսի Վարդանյանին՝ տաղավար տեղադրելու նպատակով:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Ռուզաննա Հովհաննեսի Վարդանյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 19.9քմ մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիր՝ 1.0քմ մակերեսով հողամասի համար ամսական վճարը սահմանելով 1200 (հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. մայիսի 19
ք. Վանաձոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 մայիսի 2021 թվականի N 1040

ԱՆԳՈՐԾՈՒՆԱԿ ՆՎԵՐ ՍԱՐԳՍԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱԶՈՐԻ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ 23 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2009Թ. ԹԻՎ 901 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նարինե Պողոսյանի դիմումը՝ անգործունակ Նվեր Նավասարդյանի նկատմամբ խնամակալություն սահմանելու մասին, Վանաձորի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 7-ին տրված դրական եզրակացությունը (արձանագրություն թիվ 9, կետ 3), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 34-րդ և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածներով՝ **որոշում եմ**.

1. Վանաձոր քաղաքի Չուխաջյան փողոցի թիվ 36 շենքի թիվ 28 բնակարանի բնակիչ Նարինե Ավալյայի Պողոսյանին (ծնված՝ 18.09.1963թ., անձնագիր՝ AS 0485368, տրված՝ 24.01.2019թ., 066-ի կողմից) նշանակել Վանաձոր քաղաքի Տավրոսի 20-րդ փողոցի թիվ 39ա տան բնակիչ, անգործունակ Նվեր Սարգսի Նավասարդյանի (ծնված՝ 21.06.1975թ., անձնագիր՝ AN 0448935, տրված՝ 22.04.2013թ., 018-ի կողմից) նկատմամբ խնամակալ՝ մինչև 31.12.2021թ.:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի քաղաքային համայնքի ղեկավարի 2009թ. սեպտեմբերի 23-ի «Անգործունակ Նվեր Նավասարդյանի նկատմամբ խնամակալություն սահմանելու մասին» թիվ 901 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. մայիսի 19
ք.Վանաձոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 մայիսի 2021 թվականի N 1041

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑ ԹԻՎ 8-3/11 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶՎԱԾ
ՀՈՂԱՄԱՍԸ ԱՐՍԵՆ ԱՂՎԱՆԻ ԴՈՒԼՅԱՆԻՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արսեն Աղվանի Դույանի դիմումը, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագիծը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 08022021-06-0003 և Արսեն Աղվանի Դույանի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 26022021-06-0045 վկայականները, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ կետերով և 2-րդ մասով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Խորենացու փողոց թիվ 8-3/11 հասցեում գտնվող, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակված նախագծի համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 19.94քմ մակերեսով հողամասը հողի կադաստրային արժեքով՝ 496280 (չորս հարյուր իննսուսվեց հազար երկու հարյուր ութսուն) դրամով, նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքի ձևով օտարել Արսեն Աղվանի Դույանին՝ հասարակական նշանակության շինություն կառուցելու նպատակով:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Արսեն Աղվանի Դույանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 19.94քմ մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. մայիսի 19
Ք.Վանաձոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 մայիսի 2021 թվականի N 1042

ՎԱՆԱԶՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ
ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ-ԱՌԻԴԻՏՈՐ ԳՈՐ ՍԵՐԳԵՅԻ ՄԱՅԱԿՅԱՆԻՆ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 17 մարտի 2021 թվականի թիվ 538 որոշումը
և ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի գ)
կետով՝ **որոշում եմ.**

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի առաջատար
մասնագետ-աուդիտոր Գոռ Սերգեյի Մացակյանին (պաշտոնի ծածկագիր՝ 3.1-6) շնորհել
Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 1-ին դասի կրտսեր ծառայողի
դասային աստիճան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. մայիսի 19
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 մայիսի 2021 թվականի N 1043

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՉՈՒԽԱՋՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 62/1-32/1 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶՎԱԾ
ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ
ՏԱԹԵՎԻԿ ԺՈՐԱՅԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Տաթևիկ Ժորայի Սահակյանի 28.01.2021թ. թիվ 02/1290 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 26042021-06-0027 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ.**

